

ՎԱՐՂԱՆԱՆՔ

Ազգային, կրօնական բազմաթիւ տօներու մէջ ամենէն ժողովրդականն է՝ Վարդանանքը: Նոյնիսկ օտարներ, որոնց մէջ կ'ապրի հայ Սփիւռքը, որոշ չափով ծանօթ են այս անունին եւ գիտեն, որ ան մեծ նշանակութիւն ունի հայութեան համար:

Վարդանանքը՝ յիշատակութիւնն է պատմական ճակատամարտի մը, որ մղուած է հայ ժողովուրդին կողմէ 451 թուին, պարսիկ բռնատիրութեան դէմ:

Ճակատամարտը՝ ղեկավարած է զօրավար Վարդան Մամիկոնեան:

Դէպքին ազգային-եկեղեցական տօնի եւ տօնախմբութեան տուն տուող պատճառները եղած են բազմատեսակ. քաղաքական, ազգային, կրօնական, մշակութային...: Ներկայիս՝ քննական պատմութիւնը անոր պատճառները կը մեկնաբանէ նաեւ մարդկային իրաւանց արժէքներու համար մղուած պայքարով. հոն՝ որովհետեւ, տակաւին Ե. Դարուն, ի յայտ կու գայ, որ հայ ժողովուրդը ի գին մեծ զոհողութիւններու, նախանձախնդրութեամբ պայքարած է մարդկային կեանքին բարձր արժէք ներկայացնող սկզբունքներու համար եւ այդ նպատակով հաւաքաբար կատարած է մեծ զոհողութիւններ:

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հայաստան 387 թուին անկարելիութեան մէջ գտնուած էր պայքարելու պարսիկ եւ յոյն երկու հզօր պետութիւններուն դէմ, որոնք յարատեւ յարձակումներով կը ջանային տիրել իր վրայ: Ի վերջոյ երկու պետութիւնները բաժնած էին Հայաստանը իրենց միջեւ եւ համաձայնած, որ արեւմտեան մասին պիտի տիրեն յոյները, իսկ արեւելեան մասին՝ ուր կը գտնուէր նաեւ հայոց մայրաքաղաքը, պարսիկները:

Այնուհետեւ, երկու պետութիւնները կը վարեն հայերը իրենց մէջ ձուլելու քաղաքականութիւնը:

Յոյները կը ճնշեն հայ եկեղեցիին վրայ եւ դաւանական մոլեռանդութեամբ, կը ջանան եկեղեցւոյ միջոցով հայ ժողովուրդը հոգեպէս ենթարկել իրենց:

Պարսիկները՝ իրենք եւս կ'ուզեն ժողովուրդը ձուլել իրենց մէջ, բայց ոչ թէ դաւանական հարցերով, այլ՝ ամբողջական կրօնի ուրացութեան ճամբով:

Երկու հզօր պետութիւններն ալ համոզուած էին, որ հաւատքի մէջ խտացուած հոգեկան եւ բարոյական արժէքներու միջոցով կը յաջողին հասնիլ իրենց նպատակին:

Այդ համոզումները սակայն եւ յատկապէս պարսիկներուն մօտ հակառակ իրենց բանակային հսկայ ուժերուն, յաջողութեան չեն հասնիր:

Հայ ժողովուրդի գրեթե բոլոր խաւերուն մէջ, զօրաւոր ու խոր արմատներ նետած էր քրիստոնէութիւնը իր բարոյական ուսուցումներով եւ ազգայնութիւնը՝ մշակութային գարթօնքի ճամբով:

Քրիստոսի առաքեալներէն Թադէոսի եւ Բարթողիմէոսի քարոզչութեան շրջանէն սկսեալ, առաջին իսկ դարէն, նոր կրօնը տարածուած էր հայութեան թէ՛ արքունական, թէ՛ ժողովրդային խաւերուն մէջ:

301 թուին, Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ Բ. թագաւորի օրով, հին բոլոր ազգութեանց մէջ առաջինը ըլլալով հայ ժողովուրդը պետականօրէն կ'ընդունի քրիստոնէութիւնը եւ զայն կը դարձնէ պաշտօնական կրօն:

405 թուին, Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակ Հայրապետի եւ Վռամշապուհ թագաւորի օրով, կը կատարուի գիւտը՝ հայ գիրերուն: Աստուածաշունչը կը թարգմանուի հայերէնի: Հայերէնով կը գրուի հայ ժողովուրդի անցեալի փառաւոր պատմութիւնը. կը հայացուին հայ եկեղեցւոյ արարողութիւնները. ամէն տեղ կը բացուին հայ դպրոցներ եւ հիմը կը դրուի Հայ Մշակոյթին: Իբրեւ հետեւանք այդ բոլորին, անշուշտ աւելի կ'ամրանայ հայկական ինքնութիւնը եւ կ'աճի հայրենասիրութիւնն ու ազգայնութիւնը զանգուածներուն մէջ:

Ահա այսպիսի ժամանակաշրջանի մը մէջ է, երբ Ե. Դարու կէտերուն, պարսիկները՝ Յազկերտ արքայի օրով, ոչ միայն կը սաստկացնեն քաղաքական եւ տնտեսական ճնշումները, այլեւ կը հրահանգեն, որ ուրացուի քրիստոնէութիւնը եւ ժողովուրդը անմիջականօրէն կրօնափոխ դառնայ:

Կը ստեղծուի անշուշտ ծանր կացութիւն:

Երկրի բոլոր շրջաններէն հայ ժողովուրդի մեծամեծները կը հաւաքուին Աշտիշատ քաղաքին մէջ: Ժողով կը գումարեն, կը քննեն Պարսկաստանի պահանջը, ապա՝ կը խմբագրեն պատմական սքանչելի պատասխան մը եւ հայրենասիրական ու կրօնասիրական առողջ զգացումներով կը մերժեն ուրացութեան գաղափարը:

Պարսիկ Թագաւորը հայոց ժխտական պատասխանը առնելով, սաստիկ վրդովուած՝ կը հրամայէ, որ անոնք՝ հայոց մեծամեծները, անձամբ ներկայանան իրեն, Տիգրանի մէջ:

Հրամանը կը գործադրուի:

Հայ ժողովուրդի ղեկավարները՝ զինուորական եւ աշխարհական, կը մեկնին Պարսկաստան, ուր անգամ մըն ալ կը յայտնեն իրենց հաստատ որոշումները:

Յազկերտ՝ վճռական իր որոշումին մէջ, կը հրամայէ բանտ առաջնորդել բոլորը եւ կ'աւելցնէ. «Մահ անոնց, որոնք անմիջապէս չեն գործադրեր արքայական հրամանը»:

Հայ մեծամեծներուն համար անակնկալ էր ստեղծուած կացութիւնը: Կը զգան, որ դաւադրութեան մը զոհ պիտի դառնան: Մահուան լուրջ սպառնալիքի տակ, բանտէն մէջ կը խորհրդակցին իրենց առած որոշումներուն եւ մանաւանդ՝ հայրենիքին ու ժողովուրդի կացութեան մասին: Թէեւ բոլորը վճռական իրենց կրօնական, բարոյական սկզբունքները պահելու որոշումին մէջ, բայց՝ մտահոգ հայրենիքի եւ հայրենի ժողովուրդի ճակատագրով՝ գաղափարը կ'ունենան, որ փոխադարձաբար, իրենք եւս դիւանագիտական ընթացքով մը, կամ՝ առ երես, պարսից արքային յայտնեն՝ թէ կ'ընդունին ուրացութեան հրամանը, որպէսզի Հայաստան վերադառնալով, ազատ պայմաններու մէջ կազմակերպեն ըմբոստութիւնը բռնատիրութեան դէմ:

Արգելարանին մէջ բոլորը Աւետարանին վրայ երդում կ'ընեն, որ երբ երկիր վերադառնան, մէկ սիրտ, մէկ հոգի պիտի ըլլան եւ հաւատարիմ իրենց նախնիներուն՝ պիտի պայքարին հայրենական ու հաւատի նուիրական ու սուրբ նպատակին համար. Ազատութիւն, կամ իմացեալ Մահ:

Թողելով պատմութեան մանրամասնութիւնները, յայտնենք, որ ամէն ինչ կ'ընթանայ ծրագրուածին պէս:

Հակառակ անոր, որ պարսիկները ունէին մեծ թիւով բանակ եւ ուժ, բայց հայոց ղեկավարները իրենց մտքի եւ խղճի ազատութեան ու հայրենի ժողովուրդի ազատագրութեան սիրոյն, կ'որոշեն երթալ յեղափոխութեան ճամբով եւ գործնապէս ելլել Պարսկաստանի դէմ:

Ըմբոստութեան առաջին նշանը կը տրուի արդէն, երբ հայ գիւղացիները, տեսնելով Պարսկաստանէն վերադարձող իրենց ղեկավարներուն հետ եկող կրակապաշտ կրօնաւորները (մոգեր), յարձակում կը գործեն անոնց վրայ, տեղն ու տեղը մէկ մասը կ'ահաբեկեն, մաս մը կը խոշտանգեն, իսկ մնացածները՝ ահ ու սարսափի մատնելով կը փախցնեն ետ դէպի Պարսկաստան:

Կարելի է ըսել, որ բախումը սկսած էր արդէն:

Որոշ էր, որ պարսկական հսկայ ուժը շուտով պիտի շարժեր դէպի Հայաստան:

Դիմադրութեան պատրաստութիւնը չէր կրնար ուշանալ. բոլոր մեծ տոհմերը կը սկսին իրենց կռուողները կեդրոնացնել սպարապետին՝ զօրավար Վարդան Մամիկոնեանի հրամանատարութեան տակ:

Չ'ուշանար պարսկական հսկայ բանակին տեղաշարժը:

Յայտնի կ'ըլլայ, որ պատմական հանդիպումը, մեծ բախումը տեղի պիտի ունենար Աւարայրի դաշտին վրայ:

Պարսկական բանակը կը հաշուէր 300,000 լաւ զրահուած հետեւակ եւ ձիաւոր:

Հայեր՝ քով քովի բերած էին համապատասխանաբար 66,000 կռուողներ:

Սպասման շատ յուզիչ, պամտակա՛ն պահեր կ'ապրին բոլորը:

Եկեղեցական եւ աշխարհական ղեկավարները հայրենասիրական եւ կրօնական իմաստալից ճառեր կ'արտասանեն. անոնք՝ մեծերը, ոչ թէ կը ղեկավարեն սուրբ պատերազմը, այլ՝ գործնապէս կը մասնակցին:

Ամէնքը գիտեն, որ ուժերու անհաւասար կռիւ պիտի ըլլար. բայց հոգեկան կորովը ընդհանուրին մէջ կը մնար բարձր. համոզում էր, թէ՛

«Աստուծոյ համար հեշտ է

քիչ մարդկանցով շատերի գործ

կատարել եւ հասարակ մարդկանց միջոցով՝

մեծամեծ բաներ անել»:

Եղիշէ պատմիչը, որ մասնակից եղած է պատերազմին կ'աւելցնէ.

«Բազմաթիւ սաղաւարտներն ու զրահապատուած

զօրականների զէնքերը փայլում էին ինչպէս արեւի

ճառագայթների շողեր: Նաեւ բազմաթիւ սուներների

շողալուց եւ բազմախումն նիզակների ճօճուելուց,

կարծես ահագին կրակ էր թափում երկնքից...»:

«Քաջերը խիզախում էին, եւ անվեհեր

կտրիճներն՝ աղաղակում...: Ուժգին թափով իրար

զարկուելով երկու կողմից էլ բազմաթիւ վիրաւորներ

գետին ընկած թաքտում էին:

«Վարդան այնպիսի տագնապ ու իրարանցում

զցեց նրանց մէջ, որ մինչեւ անգամ Մատեան գնդի

հաստատուն կազմակերպութիւնը քայքայուեց, ցրիւ

եկաւ, եւ նա դեռեւս պարտութիւն չկրած՝ փախուստ տուեց:

«Այնտեղ երկու կողմերն էլ իրենց պարտուած էին

զգում եւ ընկած դիակների թիւն այնքան մեծ էր, որ

սմանում էր խորդուբորդ քարակոյտի:

«...Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ

կորուստ արեց այնտեղ, ուր եւ հենց ինքն էլ արժանի

եղաւ ստանալու կատարեալ նահատակութեան պսակը:

«...Երբ մէկը տեսնում էր ընկած բազմաթիւ

դիակների կոյտերը՝ սիրտը կտորատւում էր...:

Որովհետեւ ոչ թէ մի կողմը յաղթեց, եւ միւս կողմը

պարտուեց, այլ՝ քաջերը քաջերի դէմ դուրս գալով՝

երկու կողմերն էլ պարտութիւն կրեցին»: (Եղիշէ, էջ 111-113):

Եթէ կռիւը դադրեցաւ, պատճառը հայոց ղեկավարին՝ զօրավար Վարդան Մամիկոնեանի նահատակութիւնն էր. իրականութեան մէջ ոչ մէկ կողմ տիրապետած էր կամ յաղթական էր միւսին նկատմամբ:

Յայկական բանակը տուած էր 1036 նահատակներ, իսկ պարսկական բանակը՝ 3544 սպանեալ, որ կը նշանակէ՝ աւելի քան երեք անգամ աւելի մարդկային կորուստով: Միակ գլխաւոր տարբերութիւնը հոն էր, որ նահատակուած էր հայկական կողմի զօրապետը:

Փաստօրէն այնուհետեւ, յաջորդող օրերուն եւ ամիսներուն, կռիւները նորէն կը շարունակուին:

Կը փոխուի միայն պայքարին ձեւը. կը սկսի հայդուկային երկար պատերազմ՝ գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք միշտ անակնկալներով լեցուն:

Այդպիսի պատերազմը կը շարունակուի 33 տարի. մինչեւ՝ 484 թուականը, երբ պարսիկները վերջապես կը ստիպուին հրաժարիլ կրօնափոխութեան պահանջներէն, եկեղեցիները քանդելու բրտութենէն եւ ընդունիլ կրօնի եւ մշակոյթի ազատութիւնը Յայաստանի մէջ:

Այդ առիթով է, որ կը կնքուի խաղաղութեան, հաշտութեան եւ համաձայնութեան պայմանագիր, որ ծանօթ է պատմութեան մէջ իբրեւ Նուարսակի Դաշնագիր՝ ստորագրուած 484 թուին, ժամանակի հայ զօրապետ՝ Վահան Մամիկոնեանի կողմէ:

ԳԻՏԵԼԻԶՆԵՐ ԵՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Մամիկոնեան Տոհմը կամ Տունը հայկական թագաւորութեան մէջ դասուած է կարելոր նախարարութիւններու շարքին:

Արշակունեաց թագաւորութեան շրջանին, Մամիկոնեաններու ներկայացուցիչը միշտ գրուած է պետութեան պաշտպանութեան նախարարութիւնը. անո՛ր կը պատկանէր բանակի սպարապետութիւնը:

Վարդան Մամիկոնեան եղած է զաւակը Մամիկոնեան տոհմի նահապետ՝ Զամազասպ Մամիկոնեանի: Մայրը՝ Սահականոյշ, Ս. Սահակ Զայրապետի (3»-439) աղջիկն էր: Ազնուական տիկնոջը անունն էր՝ Անահիտ. ունէին երկու դուստրեր. Վարդենի-Վարդանուհի, որ Շուշանիկ ալ կոչուած է, եւ՝ Վարդանոյշ:

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Վարդան Մամիկոնեան ունեցած է երկու եղբայրներ: Անոնցմէ մէկն էր Զմայեակ Մամիկոնեան, որ պատերազմի շրջանին դեսպան եղած է Յունաստանի մէջ: Պատերազմէն ետք, երբ Զայաստան կու գայ, մաս կը կազմէ ժողովրդային կռիւներուն եւ առիթով մը ինք եւս կը նահատակուի:

Ահա, նահատակ այս Զմայեակ Մամիկոնեանի չորս զաւակներէն մէկն է Վահան Մամիկոնեանը, որ երկարատեւ կռիւները կը գլխաւորէ եւ ի վերջոյ կը յաջողի պարսիկներուն հետ կնքել ՆՈՒԱՐՍԱԿԻ ԴԱՇԻՆՔԸ, 484 թուին. դաշինք՝ որուն 1500ամեակը 1984ին տօնուեցաւ ամբողջ հայութեան կողմէ:

ՏՕՆ ԵՒ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Զայաստանեայց եկեղեցին եւ հայ ժողովուրդը Վարդանանքը նկատած է իր կրօնական եւ ազգային կարելոր տօներէն մէկը, որուն մէջ խտացուած կը տեսնէ ազգային եւ գաղափարական անժամանցելի արժէքներ:

Ամէն տարի եկեղեցին մեծ հանդիսութեամբ կը նշէ տօնը: Յաճախ կը կազմակերպուին բանախօսական հաւաքոյթներ:

Ժողովրդային գետնի վրայ, ՎԱՐԴԱՆ անուն կրողները, նաեւ անձնապէս կը տօնեն այդ օրը: Ընտանեկան, ազգականական եւ բարեկամական շրջանակներ կը շնորհաւորեն Վարդան անուն կրողները, երբեմն նաեւ կազմակերպելով մտերմիկ ճաշկերոյթներ:

ՎԱՐԴԱՆ ԵՒ ՆՈՒԻՐԱԿԱՆ ԱՅԼ ԱՆՈՒՆՆԵՐ

Կարելորությունը պետք է նկատել տալ, որ Վարդան Մամիկոնեանի հետ պատմական ճակատամարտին նահատակուած են նաեւ այլ քաջեր, որոնք եղած են յայտնի տոհմերու ղեկավարներ:

Անոնք ալ եկեղեցւոյ կողմէ սրբացուած՝ արժանացած են Վարդանանց ձօնուած «Որք Չարդարեցին» յատուկ շարականին մէջ գոհաբանութեամբ յիշատակութեան:

ՆՇԱՆԱՒՈՐ ՆԱՅԱՏԱԿՆԵՐ

ԽՈՐԷՆ՝	Խորիտրունեաց Տոհմէն
ԱՐՏԱԿ՝	Պալունիներու Տոհմէն
ՏԱՃԱՏ՝	Գնթունիներու Տոհմէն
ՀՄԱՅԵԱԿ՝	Դիմաքսեանց Տոհմէն
ՆԵՐՍԵՅ՝	Քաջբերունեաց Տոհմէն
ՎԱՅԱՆ՝	Գնունիներու Տոհմէն
ԱՐՍԷՆ՝	Ընծայնց Տոհմէն
ԳԱՐԵԳԻՆ՝	Սրուանձտեանց Տոհմէն

Յիշեալ բոլոր անունները ՎԱՐԴԱՆԻ նման տօնը կը նկատեն անուանակոչութեան առիթ: Անոնք եւս կ'ընդունին շնորհաւորութիւններ եւ կ'ունենան ընտանեկան կամ ընկերային ուրախ օր եւ ընդունելութիւններ:

* Ճշդեմք, որ դարեր շարունակ հայ ժողովուրդի մօտ անանդութիւն եղած է տօնել անձերու անուան տօնը: Ներկայ ժամանակներուն է, որ այդ անանդութիւնը որոշ չափով տեղի տուած է ծննդեան տարեդարձներու տօնախմբութիւններուն, հետեւելով տեղական ժողովուրդներու սովորութիւններուն:

ՎԱՐՂԱՆԱՆՑ ՄԵՃԱՐԱՆՔ՝
Միջազգային եւ Ազգային Չափանիշներով

Միջազգային գետնի վրայ, ինչպէս նկատել տուինք, Վարդան անունը բաւարար չափով ծանօթ է թե՛ Միջին Արեւելքի, թե՛ Արեւմտեան կարգ մը երկիրներու մէջ:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՈՒՄՆԵՐՈՒ ՄԷՁ

1978ի Ապրիլին, Նիւ Եորքի Զաղաքապետական Խորհուրդը, գլխաւորութեամբ քաղաքապետ Էտուըրտ Քաշի, միաձայնութեամբ որոշում կը կայացնէ, որ 35րդ փողոցի վրայ գտնուող հանրային զբօսայգին վերակոչուի Ս. Վարդան անունով:

Քաղաքապետութիւնը, հիմնուելով պատմութեան վրայ, կը հաստատէ, որ Վարդան խղճի, կրօնի ազատութեան եւ մարդկային իրաւունքներու համար լուրջ պայքար տարած է եւ իբր այդ՝ նաեւ նահատակուած. որով, արժանի պէտք է նկատել համապատասխան պատիւին:

Այդ մասին պաշտօնագիրը, Նիւ Եորքի Զաղաքապետութեան կողմէ, իր ժամանակին յանձնուած է Թորգոմ արք. Մանուկեանին, որ այն ատեն եղած է Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդ եւ որ ներկայիս՝ Պատրիարքն է Երուսաղէմի Հայոց:

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՁ

Միշտ նկատի առած Վարդանանց պատերազմի գաղափարական վեհ սկզբունքները, որոնց համար նահատակուած են Վարդան Մամիկոնեան եւ իր գօրականները, կառավարութիւնները հայ պաշտօնեաներուն, հայ համալսարանականներուն եւ դպրոցականներուն մասնաւոր հրամանագրով արդարացի բացակայութեան (մասնակի արձակուրդ) իրաւունք կը շնորհեն տօնին օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Վարդանի յուշարձանը կանգնեցուած է Երեւանի կարեւոր մէկ հրապարակին վրայ: Վարդան Չօրավարը ներկայացուած է խոյացող ձիու վրայ՝ մարտնչումի դիրքին մէջ:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ-ՎԱՆՔԵՐ

Դարերու ընթացքին, Հայաստանի բազմաթիւ շրջաններու մէջ ՎՆ ներառեալ Նախիջեւանն ու Արցախը ՎՆ կառուցուած են վանքեր, եկեղեցիներ, մատուռներ՝ նուիրուած Սրբոց Վարդանանց յիշատակին:

Գաղթականութեան մէջ եւս, Միացեալ Նահանգներէն մինչեւ Սուրիա եւ Լիբանան, հայկական եկեղեցիներէն շատեր կոչուած են Սրբոց Վարդանանց անունով:

1916ին, Ամերիկայի Մեսչիուսեց նահանգի Չելմսֆըրտ քաղաքին մէջ հայկական եկեղեցիներու ճարտարապետական ոճով կառուցուած առաջին եկեղեցին կը կոչուի Ս. Վարդանանց անունով:

ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բազմաթիւ արուեստագետներ սքանչելի պատկերներով անմահացուցած են Վարդանը եւ գործակիցները, անոնց մէջ դրսեւորելով ազգային, կրօնական եւ մարդկային ազատութիւններու նուիրական գաղափարները:

Բացառիկ կերպով յիշատակութեան արժանի է մեծ արուեստագետ Գրիգոր Խանճեանի հիկզ տարիներու աշխատութեանց արդիւնք՝ մեծածաւալ արուեստի գործը, որուն խորագիրն է՝

ՄԱՐ ՈՉ ԻՄԱՑԵԱԼ՝ ՄԱՐ

ՄԱՐ ԻՄԱՑԵԱԼ՝ ԱՆՄԱՐՈՒԹԻՒՆ Է

ԳՐՈՂՆԵՐ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ սրտի պարտք նկատած էին անպայման անդրադառնալ Վարդանանց ազգային եւ կրօնական օրինակելի յատկանիշներուն. ներկայիս արդէն ունինք հարուստ գրականութիւն. վեպ, թատրոն, բանաստեղծութիւն, արձակ էջեր, բանախօսութիւններ եւայլն:

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ.- Զպարտութեամբ պէտք է յիշատակել, որ Վարդանանց նուիրուած բազմաթիւ բանաստեղծութիւններու վրայ յօրինուած են գրաւիչ եւ սրտալի երգեր:

Պէտք է առանձնացնել եւ մասնաւոր յիշատակութեամբ արձանագրել նաեւ, որ միջազգային չափանիշներով մեծ երգահան Ալան Յովհաննէս՝ Նիւ Եորքէն, Վարդանանց նուիրական պատերազմին թեմայով յօրինած է համանուագ (symphony), որ մեծապէս գնահատանքի արժանացած է Միացեալ Նահանգներու եւ մանաւանդ Ճափոնի երաժշտական շրջանակներուն եւ քննադատ գրիչներուն կողմէ:

ԾԱՆՕԹ.- Բոլոր անոնք, որոնք տարուան ընթացքին յատուկ անուանակոչութեան օր չունին, Վարդանանքը կը նկատուի նաեւ անոնց համար անուանակոչութեան օր, որովհետեւ կ'ենթադրուի, որ 1036 նահատակներուն մէջ գտնուած ըլլայ նաեւ այդ անունով նահատակ մը:

Գ., Դ., Ե. կարգեր

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՕՆՑԻ

Քեզ երգեց Եղիշէն հրահեղեղ սրտի
Տարերային թափով, ա՛յնքան քաղցրախօսուն:
Դու ըմբոստ ձեռքն եղար, ոգին հսկայագուն
Իմ հայ ժողովրդի:

Վարդա՛ն Մամիկոնեան, Աւարայրեան մարտի
Դու մեծասիրտ հերոս, դու այր քաջաբազուկ,
Որ վառեցիր արեան վառ վարդերով կիզուն
Ափերը Տղմուտի:

Ահա, սաղաւարտով պայծառ, պղնձակերտ,
Ձեռքիդ սուր եւ գլխիդ փառքի պսակ՝
Գնում ես բախուելու խաւար Յազկերտի հետ:

Սակայն, կրկին կանգուն, կրկին հսկահասակ,
Յաւերժութեան դաշտով՝ դէպի արեգնաձին
Մեր գալիքն ես վարում արդար քո այրուձին:

Գ., Դ., Ե. կարգեր

ՎԱՐԴԱՆԱՆՑ

(Նախերգանք)

ՎԱՅԱՆ ԹԵՔԵԵԱՆ

Պատերազմ էր հաւատքի եւ հայրենեաց փրկութեան...
Կ'իջներ վերջին իրիկունն, ու արիւնները վաղուան
Յորիզոնին վրայ կարծես էին կանխաւ ցոլացած
Փայլատակող, եռացող եւ բարձրացող առ Աստուած...

Դաշտը ամբողջ կը դողար, իր խոր անունն՝ Աւարա՛յր
Արձագանգուած լսելով ժամանակին մէջ անծայր...
Գետը Տղմուտ կը հոսեր՝ պղտոր անունը իրեն
Ադամանդի պէս բարձած, պսպղալէն, թրթռալէն...

Յոն գագաթին Մասիսի, հոն աստուածները Յայոց
Կը հսկէին համախումբ, արձակելով ծուխ ու բոց
Նոր Աստծոյն դէմ քննտ, բայց սրտեռանդ, անհամբեր...

Եւ դիմացէն, քաղցրանիստ Արագածին ի վերեւ
Քրիստոս իջած, պահուրտած ճերմակ ամպի մը ետեւ,
Ինչպէս գիշերն իր վերջին՝ բազկատարած կ'աղօթէր...

Գ., Դ., Ե. կարգեր

Վարդան

Կարօ Պետրոսեան
Փետր. 2002

Ո՛վ Սուրբ անուն
հայրենական ու կրօնի
խորհրդանիշ,
սէր մեր անհուն:

Դուն մեր խղճի
Ազատութեան դարէ ի դար
տիպար հերոս.
սէր մեր անհուն:

Կարմիր Արեամբոյ
հերոսներովդ՝ միահոգի,
Միշտ կենդանի.
սէր մեր անհուն:

Դուն արթնութեան
Մեր կրօնի, մեր հաւատքի
Շողարձակ լոյս.
Վարդան անուն:

2., Է., Ը. կարգեր

ՍՊԱՐԱՊԵՏ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

Ամօթահար եմ այսպես մահիճի մէջ մեռնելու,
Երբ որ մարմինս է անթիւ սպիներով ծածկուած.
Կը զգամ, թէ մահն է արդէն գլխուս վերել թելաբաց,
Եւ պատրաստ եմ, անտրտունջ, բայց կը խորհիմ մտասոյզ,

Թէ կրնայի ռազմի մէջ խրոխտ հոգիս ականդել,
Աշտանակուած նժոյգի վրայ, աղեղը ձեռքիս,
Նիզակներու, սուրերու շկահիւնին ես ընտել.
Ի՛նչ տառապանք է հիմա, որ մահը ծե՛ր տեսնէ զիս...

Ա՛հ, բերե՛ք մօտս բոլոր իմ գրահներս, վրնջէ թո՛ղ
Դրան առջեւ, անհամբեր՝ տիրոջ գալուն սպասող
Իմ երիվարս հրեղէն, եւ զիս տարե՛ք դեռ արթուն

Լոյսի՛ն, որպէսզի տեսնեմ անոր ծագիլը հեռո՛ւն,
Լեռներուն ծոցը մռայլ՝ ոսկի հրդեհ մշտաբոց,
Ու մահուան դեմ կանգնիմ ես՝ սպարապետը հայոց...

Չ., Է., Ը. կարգեր

ՎԱՐԴԱՆԱԿԱՆ

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Վարդանանք մարդիկ էին տեսիլքի.

- Թռի՛չք ունեին

Ու թե՛ւ մորրիկի:

Տեսիլքի համար՝

Անմեռ Վարդանանք մեռնի՛լ գիտեին.

- Մեռան՝ յաղթեցի՛ն.

Չի մահը չուներ խայթ՝ իրենց հոգւոյն.

Կամքի գրահո՛վ պաշտպանուած էին՝

Տղմուտ ասփերուն,

Ոսկեդար թուին:

Վարդանանք մարդիկ էին հաւատքի.

- Երկի՛նք ունեին

Եւ ա՛ստղ՝ երկնքին:

Երկնքի համար

Անյաղթ՝ Վարդանանք մեռան՝ յաղթեցի՛ն,

Աստղն իրենց սրտին,

Ինչպէս կը յաղթէ լոյսը խաւարին

Եւ բարին՝ չարին:

Ե՞րբ է պարտուեր խաչը կրակէն,

Քաջը՝ նիզակէն,

Որ ընկրկէին սուրի մետաղէն,

Որ ընկճուէին սուր դաւի խաղէն՝

Տղաքն այս լոյսի,

Շաւարշան դաշտին վրայ հրեղէն:

Վարդանանք տանտեր էին հայ հողի.

- Ունեին նախա՛նձ

Եւ սե՛ր հայրենի:

Այս սերով շահուած,

Սուրբ հողի համար մի՛այն մահացան՝

Չմեռա՛ն երբեք,

Արե՛ւ ատրաշէկ՝

Սա՛յր մտան միայն:

Ե՞րբ են Գաղափար ու Ոգի մեռեր,

Որ նուաճուէին Վարդանանք մահէն՝

Թէեւ զարնուած զէնք ու գրահէն,

Աւարայրն ի վեր:

Այսպես, Վարդանանք,
Մարդի՛կ հասարակ՝ բայց կա՛մք բացառիկ,
Տեսի՛լք անառիկ,
Հաւատքով կառչած կողին Յիսուսի,
Հայ սերով կառչած հողի՛ն Մասիսի
Եւ ուխտով՝ շողի՛ն Լուսաւորիչի,
Անմահ Վարդանանք
Ինկան՝ հիւսեցին
Մայր Հայաստանի ճակատին պսա՛կ
Ու հեքիաթի փա՛ռք՝
Վարդ ու ոսկիովն իրենց արիւնին,
Ինկան՝ կանգնեցին դրօ՛շ յաղթութեան,
Հայոց Պատմութեան գագաթին ճերմակ...